



The Hero In You Foundation ներկայացնում է

Rocket's

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԲՈՒՅԿ




Համագործակցելով՝

Shake
Out

SC/EC
AN NSF+USGS CENTER

Shake!lert™


Ողջուն, ես Rocket եմ, քո
Երկրաշարժի մասնագետը: Ավարտիր
այս գրքույկի գործողությունները,
և դու նույնպես երկրաշարժի
մասնագետ կդառնաս:



Ի՞նչ է ԵՐԿՐԱՇԱՐԺԸ:


Երբ գետինը շարժվում է, մենք դա անվանում ենք երկրաշարժ: Երբեմն այն մի քիչ է շարժվում, իսկ երբեմն այն շատ է շարժվում: Երկրաշարժերը կարող են վնասել շենքեր և վայր գցել իրեր: Երբեմն մարդիկ վնասվում են:

Երկրաշարժերին երբեմն հաջորդում են բազմաթիվ այլ ցնցումներ, որոնք կոչվում են հետցնցումներ: Որպես կանոն, դրանք ավելի թեթև են և տեղի են ունենում մի քանի օր շարունակ կամ ավելի երկար:




Ներկիր այս էջը:

Ինչո՞ւ են երկրաշարժեր տեղի ունենում:



ԵՐԿՐԱԳՆԴԻ մակերեսը
նման է ձվի կոտրված
կճեպի:




ԹԻԹԵՂ

ԲԵԿՎԱԾՔ




Երբեմն կտորներն արագ սայթաքում
են ԲԵԿՎԱԾՔՆԵՐԻ երկայնքով, և
ԳԵՏԻՆԸ ՑՆՑՎՈՒՄ Է: Սա կոչվում է
ԵՐԿՐԱՇԱՐԺ:

Կտորները կոչվում են
ԹԻԹԵՂՆԵՐ: Բոլոր կտորները
շատ դանդաղ են շարժվում:
Սովորաբար նրանք կպած
են միմյանց իրենց եզրերի
երկայնքով, որոնք կոչվում են
ԲԵԿՎԱԾՔՆԵՐ:



Օգտագործիր 2-րդ էջում նշված երկրաշարժի մասին տեղեկությունները և բառերի բանկը, որպեսզի կարողանաս լրացնել բացերը:

1. _____ դրսի մասը նման է ձվի կոտրված կճեպի:
2. Երբեմն կտորներն արագ _____ են բեկվածքի երկայնքով, և գետինը շարժվում է:
3. Երբ երկրագնդի կտորները արագ սայթաքում են բեկվածքների երկայնքով, գետինը _____ է:
4. Երբ գետինը ցանցվում է, դա կոչվում է _____ :
5. Երկրագնդի թիթեղների եզրերը կոչվում են _____ :
6. Երկրագնդի մակերեսի կտորները կոչվում են _____ :
7. Երկրաշարժի ժամանակ _____ ցնցվում է:




Բառերի բանկ

երկրագունդ սայթալել երկրաշարժ բեկվածքներ

ԱՐԻ՝ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԻՐԵՐԻ ՈՐՍ ԱՆԵՆՔ

Ձեր տան մեջ գտնվող շատ բաներ կարող են վայր ընկնել և վնասել քեզ: Դրանք տեղափոխիր ավելի ցածր տեղեր կամ ամրացրու դրանք, որ վայր չընկնեն:



«X» նշան դիր այն ապրանքների վրա, որոնք կարող են վնասել քեզ, եթե վայր ընկնեն: Ներկիր այս էջը:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԸ

Վստահ եղիր, որ դու և քո ընտանիքն արտակարգ իրավիճակի պլան ունեք, որը ներառում է հանդիպման անվտանգ վայր:

Լրացրու կոնտակտային ցանկը ստորև, որպեսզի դու և քո ընտանիքը կարողանաք գտնել միմյանց, եթե միմյանցից բաժանվեք:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԻՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անուն՝

Ծննդյան ամսաթիվ՝

Իմ հասցեն՝

Հանդիպման վայրը՝

Իմ հեռախոսահամար՝

Առողջական վիճակներ՝

Ալերգիաներ՝

Դեղորայք՝

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐ՝

Ոստիկանություն՝

Ծնողի/Խնամակալի հեռախոսահամար՝

Ծնողի/Խնամակալի հեռախոսահամար՝


Բարեկամի հեռախոսահամար՝

Հարևանի հեռախոսահամար՝



ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ. ԴՈՒ ՊԱՏՐԱՍՏՎԱ՞Ց ԵՍ:

Անպայման ընտանիքի համար ունեցիր «արագ արձագանքման պայուսակ», եթե ստիպված լինես տարհանվել ցնցումները դադարեցնուց հետո:



Շրջանակի մեջ առ այս իրերը, որոնք հարկավոր են քո «արագ արձագանքման պայուսակի» համար: Որից հետո ներկիր այս էջը:

Քեզ անհրաժեշտ է նաև սեփական «մահճակալի տակի»
պայուսակ ունենալ, որպեսզի անվտանգ լքես տունը: Վստահ
եղիր, որ պայուսակը կապված է քո մահճակալին:



Շրջանակի մեջ առ այս իրերը, որոնք պետք է դնես
պայուսակի մեջ: Որից հետո ներկիր այս էջը:


ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿ

Երբ գետինը ցնցվում է կամ ՏԱԳՆԱՊԻ ազդանշան է ստացվում (էջ 10), դու պետք է ՊԱՐԿԵՍ քո գտնված տեղում, ԾԱԾԿԵՍ գլուխդ և վիզդ և ԲՈՆՎԵՍ:

- հեռու մնա ապակուց և պատուհաններից
- մի կանգնիր դռների արանքում
- դուրս մի վազիր
- եթե հնարավոր է, մտիր սեղանի տակ



ՊԱՐԿԵՔ



ԾԱԾԿՎԵՔ



ԲՈՆՎԵՔ





Դրսում, փոխադրվիր
ավելի մեծ բաց տարածք:



Ավտոմեքենայում, կանգ առ
ճանապարհի եզրին: Մնա մեքենայում
մինչև ցնցումները դադարեն:



Մահճակալի մեջ, շրջվիր փորի վրա և
բարձով փակիր քո գլուխն ու վիզը:



Անվասայլակում, անշարժացրու
անիվները և ծածկիր գլուխդ ու վիզդ:



Ներկիր այս էջը:


ՎԱՂ ԶԳՈՒՇԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Եթե դու մոտ ես երկրաշարժի գոտուն, դու թերևս ՏԱԳՆԱՊԻ ազդանշան կստանաս բջջային հեռախոսի, անլար սարքի վրա, հեռուստացույցով, ռադիոյով կամ PA համակարգով:

Եթե դու ՏԱԳՆԱՊԻ ազդանշան ստանաս, մի սպասիր ցնցումներին, որպեսզի... ՊԱՐԿԵՍ, ԾԱԾԿՎԵՍ և ԲՈՆՎԵՍ:

Եթե ցնցումներ զգաս կամ ՏԱԳՆԱՊԻ ազդանշան ստանաս, ապա ժամանակն է, որպեսզի...

ՊԱՐԿԵՍ, ԾԱԾԿՎԵՍ և ԲՈՆՎԵՍ:




Ներկիր այս էջը:

9-1-1

Լսիր քո տեղական ռադիոկայանը՝ երկրաշարժի վերաբերյալ թարմ տեղեկությունների համար:

Եթե շտապ օգնություն պահանջող իրավիճակում ես, ինչպես օրինակ հրդեհը կամ լուրջ վնասվածքը, կարող ես զանգահարել 9-1-1:

Անպայման հանգիստ մնա:



9-1-1 համարները հերթականությամբ նշված են այստեղ 5 անգամ: Մենք շրջանակի մեջ ենք առել մեկը: Շրջանակի մեջ առ մյուս 4-ը: Ներկիր այս էջը:

ԻՄԱՅԻՐ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ ՓԱՍՏԵՐԸ



Նստիր ընտանիքիդ հետ և պատասխանիր
հետևյալ հարցերին:

1. Ի՞նչ է երկրաշարժը: (Էջ 1) _____

2. Ինչպե՞ս է կոչվում այն վիճակը, երբ
երկրաշարժին հաջորդում են այլ
երկրաշարժեր: (Էջ 1) _____

3. Ի՞նչ պետք է անես քո տան մեծ իրերի
հետ, որոնք կարող են վայր ընկնել: (Էջ 4)

4. Դու գիտե՞ս քո հասցեն և հեռախոսահամարը: (Էջ 5) _____

5. Ի՞նչ իրեր են ներառված քո Արագ արձագանքման պայուսակի մեջ:
(Էջ 6) _____

6. Ի՞նչ իրեր են ներառված քո Մահճակալի տակի պայուսակի մեջ: (Էջ 7)

7. Ի՞նչ պետք է անես, երբ գետինը ցնցվի: (Էջ 8) _____

8. Երբ գետինը ցնցվի, պե՞տք է արդյոք դուրս վազել: (Էջ 9) _____

9. Երբ գետինը ցնցվի, պե՞տք է արդյոք սեղանի տակ մտնել: (Էջ 9)

10. Երբ գետինը ցնցվի և դու անկողնում ես, ի՞նչ պետք է անես: (Էջ 9)

11. Եթե իրական շտապ օգնություն պահանջող վիճակում եք, դ՞ր համարով
կզանգահարես: (Էջ 11) _____

12. Եթե դու երկրաշարժի տագնապի ազդանշան ստանաս հեռախոսիդ
վրա, ի՞նչ պետք է անես: (Էջ 10) _____

Էջ 3-ի պատասխանները

1. Երկրագնդի
2. սայթաքում

3. ցնցվում
4. երկրաշարժ
5. բեկվածքներ

6. թիթեղներ
7. գետին

ԱՊՐԵ՛Ս

Զեռքբերման վկայական Շնորհավոր

Դու երկրաշարժի մասնագետ ես:


Ամսաթիվ _____

Ստորագրություն *Rocket* 



The Hero In You
Foundation

Ներկիր և լրացրու այս վկայականը և փակցրու այն
քո պատին:





Երկրաշարժերը ցնցում են գետինը, վնասում շենքերը և կարող են վնասել մարդկանց:

Rocket's Երկրաշարժի անվտանգության
գործողությունների գրքուկը երեխաներին
սովորեցնում է անվտանգ և պատրաստված
մնալու համար անհրաժեշտ գործիքներ:

ԵՐԿՐԱՇԱՐՃԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ

- ☐ Պատրաստիր ԵՐԿՐԱՇԱՐՃԻ
ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ
ՊԱՅՈՒՍԱԿ, եթե ստիպված
լինես տարհանվել:
- ☐ Իմացիր քո ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ
ԿՈՆՏԱԿՏՆԵՐԻ
հեռախոսահամարները:
- ☐ Երբ երկրաշարժ տեղի ունենա,
դու պետք է ՊԱՐԿԵՍ, ԾԱԾԿՎԵՍ
և ԲՈՆՎԵՍ:
- ☐ ԱՄՐԱՅՐՈՒ ԾԱՆՐ ԻՐԵՐԸ,
որպեսզի դրանք չընկնեն:
- ☐ ՄՆԱ ՀԱՆԳԻՍՏ՝ ավելի լավ
որոշումներ կայացնելու
համար:

“Դպրոցական վարժանքների
պատճառով, ինչպիսին է ShakeOut-ը,
երեխաները երկրաշարժի
դեպքում անվտանգ լինելու մասին
հաճախ ավելի շատ բան գիտեն,
քան իրենց ծնողները: Rocket-ի
Երկրաշարժի անվտանգության
գործողությունների գրքուկը
երեխաների համար հաճելի միջոց
է ավելին իմանալու և օգնելու իր
ամբողջ ընտանիքին ավելի լավ
պատրաստված լինելու համար»:

Mark Benthien, Հանրության
հետ կապերի տնօրեն,
Հարավային Կալիֆորնիայի
Երկրաշարժի կենտրոն



@RocketRules1



TWO BIRDS ARTWORK

Printed in the United States of America
ISBN 978-0-578-72673-1
A 501(c)(3) Nonprofit Organization
© 2020 Bunni and Rick Benaron

RocketRules.Org

